**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 4**

**22.01.2020Թ. ԿՆՔՎԱԾ N <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3>> ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Չարենցավան << 01 >> 06 2020թ.

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ-ը**, ի դեմս տնօրեն **Գ. Աբրահամյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **<<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ն,** ի դեմս Ընկերության տնօրեն **Ս. Բեգլարյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 22.01.2020թ. կնքված N <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը եկան համաձայնության 22.01.2020թ. կնքված N <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3>> գնման պայմանագրի Հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում և Հավելված 2-ում՝ վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություն, և այն մասին, որ 3-րդ եռամսյակում պլանավորված ապրանքների մատակարարումն իրականացնել 2-րդ եռամսյակում:

1.2 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված ապրանքները (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքները և վճարել դրա համար:

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած ապրանքների գինը ներկայացված է Համաձայնագրի թիվ 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գումարը կազմում է **5558840 (հինգ միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ**, ներառյալ՝ ԱԱՀ-ն: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը, և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

3.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածները կազմված են 6 (վեց) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **<<ԳՆՈՐԴ>>** | **<<ՎԱՃԱՌՈՂ>>** |
| --- | --- |
| **ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ** | **<<ՖԼԵՇ>> ՍՊԸ** |
| **ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1** | **ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30** |
| **<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ** | **<<ԱՐԱՐԱՏԲԱՆԿ>> ԲԲԸ** |
| **Հ/Հ 16028014479300** | **Հ/Հ 15100166690902** |
| **ՀՎՀՀ 02809386** | **ՀՎՀՀ 01808789** |
| | **էլ. հասցեն flashltdtender@gmail.com** |
| | **հեռ. (37410) 53-42-33** |
| **Տնօրեն Գ. Աբրահամյան** | **Տնօրեն՝ Ս. Բեգլարյան** |
| (ստորագրությունը) | (ստորագրությունը) |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Հավելված N 1
22.01.2020թ. կնքված <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3>> ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
<<01>> 06 2020թ. կնքված թիվ 4 համաձայնագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գին/ՀՀ դրամ | ընդհանուր գին/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 09132200 | Բենզին, ռեգուլյար | Բենզին, ռեգուլյար Աի-92-Կ5, <<ՌՈՍՆԵՖՏ>> բաժնետիրական ընկերություն | Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ³-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը՝ 15 °C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ³, ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3 %, էթանոլ-5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ ($C^5$ և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 %, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված <<Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի>> | լիտր | 425 | 354840 | 950 | ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1, կտրոնային | 250 | 1-ին եռամսյակ (հունվար, փետրվար) |
| | | | | | | 390 | | | | 140 | 1-ին եռամսյակ (մարտ) |
| | | | | | | 310 | | | | 80 | 2-րդ եռամսյակ |
| | | | | | | 280 | | | | 240 | 3-րդ եռամսյակ |
| | | | | | | 425 | | | | 240 | 4-րդ եռամսյակ (մինչև 25.12.2020թ.) |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 09134200 | Դիզելային վառելիք | Դիզելային վառելիք ԴՏ-Լ-Կ5, <<ՌՈՍՆԵՖՏ>> բաժնետիրական ընկերություն | Ցետանային թիվը 51-ից ոչ պակաս, ցետանային ցուցիչը-46-ից ոչ պակաս, խտությունը $15^{0}$ C ջերմաստիճանում 820-ից մինչև 845 կգ/մ$^{3}$, ծծմբի պարունակությունը 350 մգ/կգ-ից ոչ ավելի, բռնկման ջերմաստիճանը 55 $^{0}$C-ից ոչ ցածր, ածխածնի մնացորդը 10% նստվածքում 0,3%-ից ոչ ավելի, մածուցիկությունը 40 $^{0}$C-ում՝ 2,0-ից մինչև 4,5 մմ$^{2}$ /վ, պղտորման ջերմաստիճանը՝ $0^{0}$ C-ից ոչ բարձր: Անվտանգությունը, մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված <<Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգ>>-ի: | լիտր | 445 | 5204000 | 13000 | ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1, կտրոնային | 3500 | 1-ին եռամսյակ (հունվար, փետրվար) |
| | | | | | | 410 | | | | 2000 | 1-ին եռամսյակ (մարտ) |
| | | | | | | 350 | | | | 800 | 2-րդ եռամսյակ |
| | | | | | | 300 | | | | 3000 | 3-րդ եռամսյակ |
| | | | | | | 445 | | | | 3700 | 4-րդ եռամսյակ (մինչև 25.12.2020թ.) |

**<<ԳՆՈՐԴ>>**
**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ**
**Հ/Հ 16028014479300**
**ՀՎՀՀ 02809386**

**Տնօրեն՝ Գ. Աբրահամյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

**<<ՎԱՃԱՌՈՂ>>**
**<<ՖԼԵՇ>> ՍՊԸ**
**ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30**
**<<ԱՐԱՐԱՏԲԱՆԿ>> ԲԲԸ**
**Հ/Հ 15100166690902**
**ՀՎՀՀ 01808789**
**էլ. հասցեն flashltdtender@gmail.com**
**հեռ. (37410) 53-42-33**

**Տնօրեն՝ Ս. Բեգլարյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 2
22.01.2020թ. կնքված <<ՉՀ-ՄՉՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/3>> ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
<<01>> 06 2020թ. կնքված թիվ 4 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09132200 | Բենզին, ռեգուլյար | 0 | 0 | 0 | 0 | 354840 | 354840 | 354840 | 354840 | 354840 | 354840 | 354840 | 354840 | 354840 |
| 2 | 09134200 | Դիզելային վառելիք | 0 | 0 | 0 | 0 | 5204000 | 5204000 | 5204000 | 5204000 | 5204000 | 5204000 | 5204000 | 5204000 | 5204000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված խմբաքանակների:

<<ԳՆՈՐԴ>>
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 16028014479300
ՀՎՀՀ 02809386

Տնօրեն՝ Գ. Աբրահամյան

(ստորագրությունը)
Կ.Տ

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<ՖԼԵՇ>> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացու 30
<<ԱՐԱՐԱՏԲԱՆԿ>> ԲԲԸ
Հ/Հ 15100166690902
ՀՎՀՀ 01808789
էլ. հասցեն flashltdtender@gmail.com
հեռ. (37410) 53-42-33

Տնօրեն՝ Ս. Բեգլարյան

(ստորագրությունը)
Կ.Տ